

Биолог. журн. Армении, 1-2 (56), 2004

УДК 619:615:285:595:636.92(084)

ՍԱՐԿՈՊՏՈՋ ԴԱՅԱՏԱՆԻ ՃԱԳԱՐԱԲՈՒԾԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ԵՎ ՊԱՅՔԱՐԻ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՄՇԱԿՈՒՄԸ

Յ.Զ. ՆԱՂԱՇՅԱՆ, Ա.Վ. ՎԱՐԴԱՆՅԱՆ, Վ.Վ. ԳՐԻԳՈՐՅԱՆ,
Լ.Յ. ԳՐԻԳՈՐՅԱՆ, Օ.Վ. ՇԵՐԲԱԿՈՎ

Հայկական գյուղատնտեսական ակադեմիա, 375009, Երևան

It was revealed that the rabbits sarcoptic mange has wide distribution in Armenia and disturbs the development of rabbit-breeding. The 0.1% aquatic emulsion of neocidole was recommended for the treatment of the disease.

Саркоптоз - клещ - неоцидол - кролик

Հայաստանի գյուղատնտեսության ոլորտում սեփականաշնորհման հետևանքով խոշոր անասնապահական տնտեսություններին փոխարինեցին մանր և միջին անասնապահական տնտեսությունները, որոնցում հաճախակաբուժային միջոցառումների բացակայության հետևանքով մեծ տարածում ստացան, ընդգրկելով հանրապետության համարյա բոլոր տնտեսությունները, մի շարք ինվազիոն հիվանդություններ, ինչպիսիք են սարկոպտոիդոզները:

Սարկոպտոիդոզները անասնապահությանը պատճառում են մեծ տնտեսական վնաս, որը գոյանում է կենդանիների քաշաճի նվազեցման, ստացված հումքի անորակության և տարին բոլոր կատարվող հարկադիր բուժական ու կանխարգելիչ միջոցառումների հետևանքով:

Վերջին տասը տարիների ընթացքում, կենդանիների մոտ առավել տարածված սարկոպտոիդոզային հիվանդություններից են ոչխարների պսորպտոզը, խոզերի և շների սարկոպտոզը, մորթատու զագանների օթոդեկտոզը և նոթոդերոզը, ճագարների պսորոպտոզը, սարկոպտոզը և նոթոդերոզը, թռչունների կենսիդոկոպտոզը և այլն: Եթե մյուս հիվանդությունները համեմատաբար «հիմ» են և յուրաքանչյուր տարի արձանագրվում են տարբեր անասնապահական տնտեսություններում, ապա ճագարների սարկոպտոզ և թռչունների կենսիդոկոպտոզ հիվանդությունները Հայաստանում պատկանում են «նոր» հիվանդությունների թվին:

Ճագարների սարկոպտոզը ներկայումս լայն տարածում ստացած ինվազիոն հիվանդություն է, որը հարուցում են *Sarcoptes cuniculi* ներմաշկային տզերը, որոնք հիմնականում տեղակայվում են կենդանիների գլխի և շեքային հատվածներում: Ախտահարված հատվածներում սկզբում ի հայտ են գալիս փոքր հանգույցներ, այնուհետև մաշկը բորբոքվելով թեփակալվում և կեղակալվում է, մազերը թափվում են ու առաջանում է ուժեղ քոր: Շեքային հատվածի մաշկը կարմրում և կեղակալվում է: Կենդանիները քորում կամ էլ ախտահարված

հատվածները քսում են այլ առարկաների, որի հետևանքով երկրորդային վարակի ներթափանցման պատճառով առաջանում են տարաբնույթ մաշկաբորբեր: Հիվանդ ճագարները նիհարում են, մատղաշների մոտ դանդաղում է աճն ու զարգացումը, իսկ մաշկի տարածուն ախտահարումների դեպքում առաջանում են զանգվածային անկումներ: Հայաստանի պայմաններում սարկոպտոզը արձանագրվում է տարվա բոլոր եղանակներին, առավել ցայտուն ամռանը և աշնանը, անկախ պահվածքի ձևից և հասակից:

Գրականությունում բացակայում են ճագարների սարկոպտոզի վերաբերյալ աշխատանքներ, մշակված չեն հիվանդության բուժման և կանխարգելման միջոցառումներ:

Վերոհիշյալը հիմք հանդիսացավ պարզելու նեոցիդոլ պատրաստուկի բուժական արդյունավետությունը ճագարների սարկոպտոզի ժամանակ:

Նյութ և մեթոդ: Օգտագործել ենք տզաբանությունում համընդհանուր ճանաչում գտած մեթոդները: Լաբորատոր փորձերը կատարել ենք առանձնացված *S. cuniculi* կենդանի տզերի և ճագարների վրա Հայկական գյուղատնտեսական ակադեմիայի մակաբուծաբանության սեկտորի կլինիկայում: Սարկոպտոզ հիվանդությունն ախտորոշել ենք կլինիկական նշանների և կենդանիներից վերցված քերուկների մանրադիտակային հետազոտության ճանապարհով:

Ճագարների սարկոպտոզի բուժման և կանխարգելման համար օգտագործել ենք նեոցիդոլի 60%-անոց էնոլսիայի խտանյութը: Քանի որ գրականության մեջ մենք չգտանք տվյալներ նեոցիդոլ պատրաստուկի *S. cuniculi* տզերի վրա ազդեցության մասին, ապա լաբորատոր հետազոտությունները տարել ենք ըստ Նեպոկլոնովի և Տալանովի [2, 3]: Սկզբում անջատված տզերի վրա պրոբիտ անալիզի մեթոդով [1] ուսումնասիրել ենք նեոցիդոլի միջին թունավոր քանակությունները (մահացու կոնցոնտրացիա (CK)): CK_{16} կազմել է $0,00008 \pm 0,0005\%$, CK_{50} -ը՝ $0,00127 \pm 0,0007\%$, CK_{84} -ը՝ $0,01132 \pm 0,0022\%$, իսկ CK_{100} -ը $0,01 \pm 0\%$:

Առանձին տզերի անջատված ձվերի վրա ուսումնասիրել ենք նեոցիդոլի ձվասպան ազդեցությունը: Պարզվել է, որ նեոցիդոլը օժտված չէ ձվասպանիչ ազդեցությամբ:

Սկզբնական շրջանում նեոցիդոլի բուժիչ արդյունավետությունը ուսումնասիրել ենք սարկոպտոզով հիվանդ ճագարների վրա: Մշակել ենք կենդանիների զլխի հատվածը երկնվագ 7 օր ընդմիջումով, տեղային շփումների ձևով, յուրաքանչյուր կենդանու վրա ծախսելով 50մլ ջրային կախուկ: Ընդամենը մշակման են ենթարկվել սարկոպտոզով հիվանդ 30 զլուխ ճագարներ:

Արդյունքներ և քննարկում: Ինչպես ցույց տվեցին հետազոտությունները, սարկոպտոզի նկատմամբ նեոցիդոլի օպտիմալ կոնցենտրացիան համարվում է 0,1%-անոց ջրային էնոլսիան: Սարկոպտոզով ախտահարված ճագարների մոտ պատրաստուկի բուժիչ արդյունավետությունը ի հայտ է գալիս երկրորդ մշակումից 4-7 օր անց, այսինքն, երբ կենդանիների ախտահարված մաշկը հետզհետե ազատվում է կեղերից, և քերվածքների մեջ կենդանի տզեր չեն հայտնաբերվում: Բուժման 16-20 օրերին ախտահարված հատվածներից կեղերը ամբողջությամբ թափվում են, անհետանում են բորբոքային պրոցեսները, նկատվում է մազածածկի աճ և մաշկը ձեռք է բերում նորմալ տեսք:

Բացի նեոցիդոլով կենդանիներին բուժելուց, փորձ կատարվեց նաև հիվանդությունը կանխարգելելու նպատակով ճագարանոցների և վանդակների մեխանիկական մաքրումից հետո նեոցիդոլի 0,1%-անոց լուծույթի ցողարկման ճանապարհով կատարել դեզակարիզացիա:

Հետագա ամենամսյա հետազոտությունները ցույց տվեցին, որ մշակված կենդանիները ապահով են սարկոպտոզ հիվանդության նկատմամբ:

Այսպիսով, սարկոպտոզով հիվանդ ճագարներին նեոցիդոլի 0,1%-անոց կախուկով երկնվագ մշակելու դեպքում մաշկում տեղակայված սարկոպտոդային տզերը ոչնչանում են և մաշկը արագ առողջանում է: Նույն կոնցենտրացիայով

նեոցիդոլ վազարանոցների և վանդակների մշակման դեպքում արտաքին միջավայրում գտնվող տզերը ոչնչանում են, հետևաբար կանխվում է կենդանիների հետագա վարակումը և հիվանդության տարածումը: Փորձարկումների արդյունքները թույլ են տալիս ճազարաբուծական տնտեսություններին ճազարների սարկոպտոզի բուժման և կանխարգելման նպատակով օգտագործել նեոցիդոլ պատրաստուկի 0,1%-անոց կախուկը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Методические указания по первичному отбору новых акарицидов и сравнительному изучению их активности против саркоптозных клещей. М., 1982.
2. Непоклонов А.А., Таланов Г.А. Современные инсектициды, применяемые в животноводстве, М., 60с, 1968.
3. Непоклонов А.А. Химические средства защиты животных. М., 152с, 1972.

Ստացվել է 28.11.2003